«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք տարրական դասարաններում

Առարկան՝ դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Նաիրա Ստեփանյան

Ուսումնական հաստատություն՝ Արմեն Հովհաննիսյանի անվան համար 194 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն---------- 4

Ինքնուրույն ընթերցանության նշանակությունը տարրական դպրոցում---------- 5

Խնդիրները 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ դասարաններում--- ---------- 10

Ինքնուրույն ընթերցանության դասավանդման մեթոդները----------15

Սովորողների ձեռքբերումների գնահատումը---------- 17

Եզրակացություններ---------- 23

Օգտագործված գրականության ցանկ----------24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդու բազմակողմանի զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցում: Տարրական դասարանների մայրենի լեզվի դասընթացում առաջատար տեղ է գրավում ընթերցանությունը: Դրա նպատակն է՝ զարգացնել աշակերտների կարդալու և պատմելու կարողությունները, խոսքը, հարստացնել նրանց ճանաչողական գիտելիքներն ու բառապաշարը:

Մայրենիի դասավանդման ընթացքում ուսուցողական նպատակներից բացի լուծվում են նաև դաստիարակչական լուրջ խնդիրներ՝ գեղագիտական ճաշակի, աշխատասիրության, ազնվության, ճշտապահության, բարոյական ու կամային մի շարք բազմագույն հատկանիշների դաստիարակում և այլն:

Այդ աշխատանքն իրականացվում է հիմնականում երկու ուղղությամբ՝ բուն դասագործընթացում, այսինքն՝ ուսուցմանը զուգընթաց և արտադասարանային ընթերցանության միջոցով:

<<Արտադասարանային>> եզրույթն առաջին հերթին նշանակում է ոչ դասարանային, այսինքն՝ տնային ընթերցանություն, ինչպես նաև ընթերցանություն ոչ դասագրքից: Հենց դա է երեխային դեպի գեղարվեստական գրականություն տանող ճանապարհը:

Այդ աշխատանքի իրականացման լավագույն մեթոդներից է նաև նախագծային աշխատանքը, որի ժամանակ սովորողը ուսումնասիրում է տարբեր աղբյուրներ և ընթերցում տարբեր նյութեր:

Այստեղ ակնառու է դառնում նաև տարբեր առարկաների միջև միջառարկայական կապը, քանի որ սովորողը ուսումնասիրում է թեման տարբեր տեսանկյուններից՝ գտնում է նկարը, պատկերացում կազմում իր շրջապատող աշխարհի մասին:

Կրտսեր դպրոցականի համար, որպես ընթերցանության միջոց, գոյություն ունի միայն դասագիրքը: Ինչ խոսք, իր յուրահատուկ ստեղծագործություններով սովորողի համար այն մի ուրույն աշխարհ է:

Ուսման հետ կապված բոլոր խորհուրդների վերջնական նպատակը կայանում է նրանում, որպեսզի երեխան հասկանա այն ինչ կարդում է: Երեխաները պետք է հասկանան, որ ընթերցանությունը հնչյունների և տառերի հասարակ շարք չէ, որը գրված է թղթի վրա, այլ մասնիկներ, որոնք կազմում են բառեր իսկ այդ բառերը ունեն իմաստ, որը անհրաժեշտ է հասկանալ ընթերցանության ժամանակ:

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Ընթերցանության ուսուցումը բավական երկար պրոցես է: Այն պետք է ինչքան հնարավոր է շուտ սկսել, նույնիսկ մինչև դպրոց հաճախելը:

Երեխաները, որոնց հետ սկսում են ավելի վաղ տարիքում պարապել, կարելի է ասել ծնված օրվանից ստանում են գրագիտության առաջին հմտությունները: Այս երեխաների մոտ ավելի հարուստ է , բառապաշարը, նրանք ավելի հեշտ են հասկանում կարդացած գրքերի իմաստը և ավելի արագ են սկսում գրել և կարդալ:

Այն երեխաները, որոնք ավելի շատ են կարդում վաղ տարիքում, սկսում են հետաքրքրվել և կիրառել ձայնային միջոցներ բառեր արտասանելիս, փորձում են հանգավորել բառերը, իմանում են, թե ինչպես են բառերը համակցվում, աշխատում են ավելի շատ խոսել, բանաստեղծություններ անգիր անել և հասկանում են, որ այս ամենը կօգնի նրանց ավելի արագ ապահովվել զարգացման հիմքերը:

Երբ երեխաներին վաղ տարիքից սովորեցնում են կարդալ և գրագետ գրել, նրանք ավելի շուտ են սկսում տարբերել գրավոր և բանավոր խոսքը, զբաղվել ընթերցանությամբ և գրելու հմտություններով: Անկասկած, այն երեխաները, որոնք նախադպրոցական տարիքում յուրացրել են ընթերցանության և գրավորի հմտությունները, ավելի լավ կսովորեն, երբ գնան դպրոց: Այբուբենի իմացությունը նույնպես շատ կարևոր է, քանի որ բառերը կազմված են հնչյուններից և տառերից, այսպիսով այբուբենի դասավանդումը վաղ տարիքից կօգնի երեխային ավելի արագ հասկանալ, թե ինչպես են հնչյունները և տառերը կազմում բառեր, որոնք կարելի է ոչ միայն կարդալ այլ նաև գրել:

Եթե դուք ինչքան հնարավոր է շուտ սկսեք հետևել, թե ինչ և ինչպես է խոսում ձեր երեխան, ավելի հաճախ խոսեք նրա հետ, գրքեր կարդաք և պատասխանեք երեխայի հարցերին, բացատրելով նրան բառերի իմաստը, դուք կարող եք համոզված լինել՝ երբ գա դպրոց հաճախելու ժամանակը, երեխան պատրաստ կլինի հետագա ուսուցմանը:

Բազմաթիվ հետազոտական աշխատանքների արդյունքների համաձայն, գոյություն ունի կապ լեզվի վաղ զարգացման և ընթերցանության միջև: Լեզվի զարգացումը և ընթերցանությունը պահանջում են ձայնային անալիզի նույն տեսակները: Որքան ավելի լավ վեց ամսեկան երեխաները կարողանան տարբերել լեզվի ստանդարտ վանկերը, այնքան ավելի լավ նրանք կզարգացնեն լեզվի բարդ հմտությունները 2-3 տարեկան հասակում, իսկ 4-5 տարեկան հասակում ավելի հեշտ կլինի հասկանալ, թե ինչպես են հնչյունները և տառերը կապված ուղղագրության հետ:

Սակայն, որպեսզի ձեր երեխան պատրաստ լինի ընթերցանությանը, անհրաժեշտ է սահմանափակվել ոչ միայն ընթերցանությամբ և գրելու հմտությամբ, այլ նախապատրաստել երեխային ավելի ճանաչողական հմտությունների: Ճանաչողական հմտությունները ըստ էության համոզում են երեխային, որ նա ունի բոլոր հիմքերը ընթերցանությամբ զբաղվելու համար: Դրանք օգնում են լեզվի զարգացմանը, փոխըմբռնմանը, բառապաշարի հարստացմանը, նախադասության և քերականության կառուցվածքը նաև գիտելիքների հիմքն է:

Երեխային ընթերցանությանը պատրաստելիս պետք է կիրառել բոլոր ճանաչողական հմտությունները: Մանկական ճանաչողական հմտությունները և գիտելիքներիը հաճախ խթան են հանդիսանում դպրոցում երեխայի հաջող ուսուցման համար: Մանկական գրագետ խոսքը նպաստում է նրանց բանավոր հաղորդակցմանը և սովորեցնում է հասկանալ գրավոր բառերը, զարգացնելով գրագիտությունը:

Անկասկած, ընթերցանության գլխավոր նպատակը ըմբռնումն է: Նույնիսկ մինչև երեխայի ինքնուրույն կարդալը, նա լսելով այն, ինչ հաճախ և պարբերաբար կարդում են նրան իր ծնողները, օգնում է ստանալ կյանքի հիմնական հմտությունները, որոնք անհրաժեշտ կլինեն հետագա զարգացման և աճի համար: Դա նշանակում է, որ պետք է կարդալ ոչ միայն հասարակ և պատմական մանկական գրքեր, այլ նաև քննարկել երեխայի հետ այդ գրքերի բովանդակությունը, գլխավոր հերոսների բնավորությունը, իրադարձությունները, որոնք տեղի են ունենում գլխավոր հերոսների հետ:

Անհրաժեշտ է որքան հնարավոր է շատ գրքեր կարդալ, որոնք կօգնեն երեխային ընդլայնել տեսադաշտը և գիտելիքները: Եթե դուք չեք ծուլանա քննարկել ձեր երեխայի հետ գրքերի բովանդակությունը, դա կհանգեցնի նրան, որ ձեր երեխան ավելի շատ կսկսի հետաքրքրվել ընթերցանությամբ, ինչը իր հերթին կհանգեցնի նրան, որ երեխան կփորձի ինքնուրույն գտնել պատմությունների կամ գրքերի շարունակությունը, որոնք կապված են այդ իրադարձությունների հետ: հագեցած…. ուսուցումը կօգնի փոքրիկ ընթերցողին ակտիվորեն կապել իր գիտելիքները կամ փորձը տեքստերում գրված մտքերի հետ, այնուհետև յուրացնել այն մտքերը, որոնք նա փորձում էր հասկանալ:

Այսպիսով նա կարող է այդ բազմաթիվ իրադարձությունները համեմատել իրական աշխարհի հետ, որտեղ նա ապրում է: Ի վերջո նա կհասկանա, որ այդ ամենում նրան օգնեցին գրքերը, որոնք նա կարդացել է: Երբեմն բավական է այն, որ դուք շփվեք ձեր երեխայի հետ, ժամանակ գտնեք խոսելու համար, զբաղվեք նրա դաստիարակությանբ և ուսուցմամբ, կիսվեք նրա հետ ձեր և ձեզ շրջապատող մարդկանց փորձով, որպեսզի նա մասնակցի ընտանիքում տեղի ունեցող իրադարձություններին:

Ընթերցանության հմտությունների զարգացումը շատ կարևոր է կրտսեր դպրոցում, եթե չասենք՝ ամենակարևորը։ Չէ՞ որ հետագա ողջ կյանքում մարդն իր գործունեության բոլոր բնագավառների համար անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը ձեռք է բերում գրավոր տեքստերի հետ շփման, այսինքն՝ընթերցանության միջոցով։

Ընթերցելու կարողությունը-ինչպես գիտենք, ընդգրկում է երկու կողմ՝ ընթերցանության տեխնիկան և ընթերցածի բովանդակության ընկալումը։

Ընթերցանության տեխնիկան գիտելիքի, ինչպես նաև հետագա ուսումնական կարողությունների հիմքն է, քանի որ բովանդակության լիարժեք ընկալում հնարավոր է տեխնիկապես վարժ ընթերցելու դեպքում միայն։ Եթե երեխան վատ է կարդում, բնականաբար չի ցանկանում զբաղվել ընթերցանությամբ։ Մյուս կողմից՝ քիչ կարդալու պարագայում չի կարող լավ կարդալ, քանի որ կարողությունը զարգացնելու հնարավորություններն են սահմանափակ։[1]

Այս կարողությունը, սակայն, հնարավոր է զարգացնել՝ օգնելով երեխային տեքստն ընկալել քայլ առ քայլ։ Հենց սա էլ անում է «Ուղղորդվող ընթերցանության» մեթոդը։ Այն հնարավորություն է տալիս մոդելավորել ընկալումը խթանող ընթերցանության գործընթաց՝ երեխաների հետ քայլ առ քայլ առաջ գնալով տեքստի հատվածներով, վերլուծելով և եզրահանգումներ անելով։

Ընդհատված ընթերցանության մեթոդով աշխատելու համար շատ կարևոր է ընտրել այնպիսի տեքստ, հեքիաթ կամ պատմություն, որին երեխաները ծանոթ չեն։

Տեքստը պետք է բաժանել տրամաբանական մի քանի մասերի։ Յուրաքանչյուր մասից հետո դադար է տրվում, որի ժամանակ պետք է որոշակի հարցադրումներով խթանել քննարկումը։

[1] Ա. Տեր-Գրիգորյան, <<Հայոց լեզվի մեթոդիկա>>, Եր. 1988թ

Կարևոր է, թե որտեղ կընդհատվի հեքիաթը, որպեսզի սովորողը կարողանա հետաքրքիր ընթացք հորինել և հետաքրքրությամբ ու անհամբերությամբ սպասել հաջորդ հատվածին: Իր գրածը և բնագիրը համեմատելու ցանկությունը սովորողի մոտ հեքիաթի շարունակությունը ընթերցելու լրացուցիչ խթան է հանդիսանում:

Կարևոր է նաև նախապես մտածել այն հարցերը, առաջադրանքները, որոնք պետք է տրվեն դադարների ժամանակ:

Բոլոր ուսուցիչները միաձայն համաձայնվում են, որ ընթերցանությունը միշտ եղել է և կլինի ցանկացած ուսուցման հիմքը: Առանց ընթերցանության հմտությունների երեխայի համար դժվար կտրվեն բոլոր առարկաները: Այն երեխաները, որոնց փոքր հասակում կսովորեցնեն սիրել և գնահատել գրքերի արժեքը, ավելի լավ կհարմարվեն դպրոցական կյանքին: Լինում են դեպքեր, երբ երեխան կարողանում է կարդալ, սակայն դժկամությամբ է կարդում, անընդհատ կոնֆլիկտների մեջ ընկնելով ծնողների հետ: Բարեբախտաբար, գոյություն ունեն մեթոդներ, որոնք կօգնեն ծնողներին սեր սերմանել երեխայի մեջ ընթերցանության նկատմամբ:

1. Բարձրաձայն կարդացեք երեխայի համար Երեխաները ուշադրությամբ լսում են այն, ինչ դուք կարդում եք, այնուհետև սկսում են սովորել կարդալ: Ձեր օրինակով դուք ցույց եք տալիս երեխային, թե ինչպես պետք է հնչի տեքստը, որքան արագ պետք է կարդալ և ինչպես չխախտել նախադասությունների կարգը: Սարսափելի չէ, եթե դուք կարդում եք երեխային մի գիրք, որը քիչ ավելի բարձր է նրա մակարդակից: Երեխաների մեծամասնությունը հասկանում է ինչի մասին է գնում խոսքը, նույնիսկ եթե պատմությունը ավելի բարձր մակարդակի է քան այն, որը սովոր է կարդալ երեխան: Կարդալով երեխայի համար, դուք սեր եք սերմանում նրա մեջ ընթերցանության նկատմամբ: Իրականում ընթերցանությունը պետք է հաճելի լինի երեխայի համար: Հաճախ փոքրիկ ընթերցողները չեն սիրում կարդալ այն պատճառով, որ կարդացածի իմաստը ավելի ուշ է հասնում նրանց, սկզբում նրանք պետք է բառեր կազմեն տառերից և միառժամանակ փորձել հասկանալ կարդացածի իմաստը, դա շատ դժվար է փոքրիկների

համար: Կարդացեք երեխայի համար բարձրաձայն այն, ինչը նա պետք է կարդա ինքնուրույն: Դա կօգնի երեխային ընկալել իմաստը, քանի որ տվյալ դեպքում երեխան ընկալում է այն, ինչ լսում է: Երբ երեխան սկսի ինքնուրույն կարդալ, մի մոռացեք խրախուսել նրան հետևյալ խոսքերով «Սիրելիս, դու հիանալի ես կարդում, ինձ շատ է դուր գալիս»:

2. Թույլ տվեք երեխային կարդալ ձեր համար Ուսուցիչները հաճախ հանձնարարում են երեխաներին 10-15 ր «տնային ընթերցանություն»: Թեև տնային աշխատանքը պետք է լինի երեխայի անհատական գործունեությունը, շատ դեպքերում ընթերցանությունը կարող է լինել ծնողների հետ միասին: Թույլ տվեք երեխային կարդալ ձեզ համար գիրք կամ այլ պատմություն, որը համապատասխանում է նրա մակարդակին:

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Ինքնուրույն ընթերցանության խնդիրներ են՝

- սովորողի ինքնարտահայտման պահանջմունքի պահպանում ու զարգացում,
- լեզվամտածողության, լեզվազգացողության զարգացում,
- բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ խոսքի, հստակ արտահայտման
- կարողությունների զարգացում,
- բառարաններից, հանրագիտարաններից, տեղեկատվական այլ աղբյուրներից, Օգտվելու հմտության զարգացում.

- ստեղծագործական մտածողության, երևակայության զարգացում, վերլուծելու, համադրելու, հակադրելու հմտությունների զարգացում, լեզվական տարրական գիտելիքների յուրացում:

1-4-րդ դասարաններում ընթերցանության նյութերի ընտրությունն էլ ինքնանպատակ չէ : Կրտսեր դպրոցականի խոսքը զգայուն է: Հայ դասական ստեղծագործությունների ուսուցումը փոխանցում է այնպիսի լեզվական կաղապարներ, որոնք նպաստում են լեզվամտածողության զարգացմանը:

Համաշխարհային մանկական գրականությունից ընտրվում են այնպիսի նմուշներ, որոնց ընթերցումը խթանում է սովորողի ստեղծագործական միտքը, նպաստում երևակայության զարգացմանը:

Ընթերցել, դեռ չի նշանակում հասկանալ: Կարևոր է կարդացածը հասկանալ:

Իրեն հասկանալի տեքստը հասկանալի ներկայացնել դիմացինին: Ընթերցելիս առանձնացնել հիմնական ասելիքը, միտքը, գաղափարը: Բառարանի օգնությամբ բացատրել անծանոթ բառն ու դարձվածքը, գտնել հանդիպած բառերի հոմանիշներն ու հականիշները, պատմելիս դրանք փոխարինել համապատասխան բառով կամ արտահայտությամբ:

Դասագիրքը չի կարող լինել ուսումնական միակ կամ գլխավոր նյութը, տեղեկատվության միակ աղբյուրը. ուսումնական նյութերը անընդհատ թարմացվումհարմարեցվում են սովորողին: Ուսումնական նյութերի հիմնական շտեմարանը մեդիագրադարանն է, որի բաժանորդն են սովորողն ու ուսուցիչը: Առաջին դասարանն ավարտող սովորողը պիտի կարողանա՝ Կարդալ և հասկանալ 2-5 նախադասությամբ տեքստ.

Տեքստում անծանոթ, անհասկանալի բառերը գտնել և ընդգծել.

- Տեքստի վերաբերյալ հարցի իր պատասխանը հիմնավորող բառը, բառակապակցությունը, նախադասությունը գտնել.

- 3-4 նախադասությունից կազմված պատմություն հորինել և գրել

  (մուտքագրել).
- Շնորհավորանքներ և կարճ նամակներ գրել.
- 1-2 նախադասությամբ ավարտել կիսատ թողած միտքը.
- Նախադասությունն սկսել մեծատառով, ավարտել վերջակետով .
- Հատուկ անունները գրել մեծատառով:

Երկրորդ դասարանցուն ներկայացվող պահանջները, բնականաբար, ավելանում են: Կարևորվում է բանավոր խոսքում նոր բառերի, արտահայտությունների ներմուծումը, միտքն ավելի գեղեցիկ, պատկերավոր և հասկանալի ներկայացնելու, սեփական կարծիքը հիմնավորելու և պաշտպանելու, դիմացինին լսելու և հարցադրումներ անելու կարողությունների ձևավորումը:[2]

Երկրորդ դասարանցին պիտի կարողանա՝

- Կարդալ և հասկանալ տեքստը.
- Տեքստում անծանոթ, անհասկանալի բառերը գտնել, ընդգծել և բացատրել.

  Տեքստի վերաբերյալ հարցի իր պատասխանը հիմնավորող բառը, ○ բառակապակցությունը, նախադասությունը, միտքը, հատվածը գտնել, ներկայացնել.
- 3-5 նախադասությամբ տեղեկատվական նյութ պատրաստել այն իրադարձության մասին, որին ինքը մասնակցել է.

Երրորդ դասարանցուն ներկայացվող պահանջներն ավելանում են: Ավելանում է ավելի շատ ինքնուրույն աշխատելու չափաբաժինը, որի ընթացքում սովորողը կատարելով լեզվական հայտնագործություններ՝ ձեռք է բերում լեզվական նոր

[2] Ջ. Գյուլամիրյան, <<Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա>>, Եր. 2009թ.

հմտություններ՝ դառնալով ավելի գրագետ: Դրան մեծապես նպաստում է իր հիմնականում գրավոր (նաև՝ բանավոր) խոսքը խմբագրելուն ու շտկելուն ուղղված աշխատանքները:

Երրորդ դասարանցուն ներկայացվող պահանջներն են՝

Բանավոր ներկայացնել կատարած բնագիտական և այլ փորձերը, ինքնուրույն կարճ հարցազրույց վարել անհրաժեշտ թեմայով.

- Խմբի հետ պատմություն հորինել, շարունակել ընկերների հորինածը. ○ Հորինել և գրել ասելուկներ, հանելուկներ և պատմություններ.
- Ստեղծագործաբար մշակել տրված հեքիաթը կամ պատմությունը (ռոդարիական հնարքների կիրառում).
- Կարդալ առաջադրանքը, հասկանալ և կատարել. ○ Կարդալ է 6-7 նախադասությամբ տեքստը և հասկանալ. ○ Գտնել ծանոթ բառերի հոմանիշներն ու հականիշները: ○ Երրորդ դասարանի աշակերտը պիտի կարողանա՝ ○ Կարդալ (մտքում և բարձրաձայն) և հասկանալ կարդացածը. ○ Գրավոր և բանավոր համառոտել և ընդարձակել կարդացածը.
- Մեկ-երկու նախադասությամբ բնութագրել ստեղծագործության կերպարներին և պատճառաբանել իր կարծիքը:

Չորրորդ դասարանցուն ներկայացվող պահանջներն ավելանում են: Չորրորդ դասարանում առավել տեսանելի է դառնում սովորողների խմբային, համագործակցային աշխատանքը թե՛ դպրոցում, թե՛ դպրոցից դուրս: Այդ աշխատանքները նպաստում են ինչպես իր, այնպես էլ ընկերոջ խոսքը /գրավոր, բանավոր / շտկելուն, այն գրագետ դարձնելուն: Այդ աշխատանքներին առավել նպաստում է կայքը:

Չորրորդ դասարանցին պիտի կարողանա՝

Տեքստը վերարտադրել համառոտ և ընդարձակ.

Տեքստը վերարտադրել տարբեր դեմքերով (հերոսների, իր, հեղինակի, անտեղյակ կամ լավատեղյակ մեկի… անունից).

Տեքստը համառոտել և ընդարձակել.

Թվարկել հերոսներին, նկարագրել և բնութագրել նրանց.

Ծանոթ տեքստից դուրս գրել կամ տեքստում նշել փոխաբերությունները, անծանոթ բառերը, դարձվածքները, առածները և այլն.

Մեկնաբանել, այլ բառով փոխարինել հանդիպած արտահայտությունները, բառերը, բառակապակցություններն ու դարձվածքները.

- Դարձվածքները փոխարինել համապատասխան արտահայտություններով և հակառակը.
- Խոսքում գործածել իրեն ծանոթ դարձվածքները, առած-ասացվածքները. ○ Տարբերել առարկա, հատկանիշ, գործողություն ցույց տվող բառերը. ○ Տարբերել նախադասության տեսակները. ○ Ուրիշի ուղղակի խոսքը դարձնել անուղղակի և կետադրել. ○ Ընթերցել և դատողություններ անել ընթերցածի վերաբերյալ. ○ Գնահատական տալ ստեղծագործության հերոսներին, նրանց ○ գործողություններին.
- Տեքստի հաղորդած տեղեկությունների հիման վրա եզրահանգումներ կատարել:[3]

[3] Մայրենիի դասագրքեր 1-4-րդ դասարաններ

ՄԵԹՈԴ և ՀՆԱՐ

Մեթոդները մանկավարժական աշխատանքում իրականացվում են տարբեր ձևերով կոնկրետ գործողություններով, հնարներով և կազմակերպման ձևերով:

ՕՐԻՆԱԿ

- Ինչ մեթոդներ կարելի է կիրառել ընթերցանության ժամանակ Ինչ մեթոդներ կարելի է կիրառել գրքի հետ աշխատանքի ժամանակ:
- Ինչից է կախված մեթոդի ընտրությունը:
- Կարելի է արդյոք նույն աշխատանքը կատարելիս ընտրել տարբեր մեթոդներ:

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ինքնուրույն ընթերցանության դասաժամերը կարելի է կազմակերպել, այնպես ինչպես մայրենիի դասաժամերն են կազմակերպվում: Ցանկացած ստեղծագործություն ուսումնասիրելիս կիրառել խաղային և համագործակցային տեխնոլոգիա , օգտվել դասավանդման նորագույն մեթոդներից: Կիրառել ԽԻԿ համակարգը: Հատկապես պետք է մեծ տեղ հատկացնել համագործակցային ուսուցմանը:

Գրքի հետ աշխատելու ժամանակ և ընթերցելիս կարելի է կիրառել տարբեր մեթոդներ կախված նյութի բովանդակությունից և նպատակից:

Հաճախ կիրառելի մեթոդներից են

- ՈՒղղորդված ընթերցանություն
- Ընտրովի ընթերցանություն Կրկնակի գրառման օրագիր
- Ընդհատված ընթերցանությունը

ԽԹԱՆՄԱՆ փուլում կարելի է կիրառել հետևյալ մեթոդները

- Կանխագուշակման աղյուսակ
- Մտագրոհ
- Խարանարդում
- Բազմանիստ

Մտածիր՝-- զույգ կազմիր՝ -- քննարկիր՝

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՄԱՆ փուլում կարելի է կիրառել հետևյալ մեթոդները

- T-աձև աղյուսակ
- Գաղափարների քարտեզագրում
- Փոխգործուն նշանների համակարգ
- Զրույց
- Խճանկար
- Ուղղորդված ընթերցանություն

ԿՇՌԱԴԱՏՄԱՆ փուլում հիմնականում կիրառվում են հետևյալ մեթոդները

- Քառաբաժան
- Կողմ –դեմի աղյուսակ
- Վիննի դիագրամ
- Խմբային աշխատանք
- Բանավեճ

Մտածողության հմտությունների ձևավորման եղանակներն են

○ Գլխավոր կամ հիմնական մտքի բացահայտումը ○ Հաջորդայնացում ○ Համեմատում և հակադրում ○ Բացահայտ և ոչ բացահայտ փաստերի և տեղեկությունների առանձնացում

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ընթերցանությունը՝ զարգացնում է միտքը, մտահորիզոնը: Գրքերի կարևորագույն և լավ առավելություններից է դրական ազդեցությունը ,որը թողնում են մեր մտահորիզոնի վրա: Ընթերցանության ընթացքում շատ մտածում ենք ,խորհում,որպեսզի հասկանանք ստեղծագործության բուն իմաստը:

Բարձրաձայն կարդացեք երեխայի համար Երեխաները ուշադրությամբ լսում են այն, ինչ դուք կարդում եք, այնուհետև սկսում են սովորել կարդալ:

Երեխան, որը չի լսել, թե ինչպես է արտասանվում բառը, բայց սեղանին տեսնելով քարտե տառերը, որոնցով կազմված է այն, ճանաչում է և կարող է ասել, թե ինչ է նշանակում, իմ կարծիքով, կարդում է: Բառը, որ նա կարդում է, նույն առնչությունն ունի գրավոր խոսքին, ինչ բառը, որ գրում է՝ հոդաբաշխ խոսքին. թե՛ մեկը, թե՛ մյուսը օգնում են նրան ընկալել իրեն ուղղված խոսքը: Այդ պատճառով, քանի դեռ երեխան հասկացությունները չի ընկալում գրավոր խոսքի օգնությամբ, չի կարդում:

Կարդալու համար հարկավոր է բարձրագույն մտավոր գործունեություն: Կարդալ սովորեցնելիս ես բացարձակապես հրաժարվում եմ այբբենարանից: Ես սովորական գրելու թղթից թերթիկներ եմ կտրում: Յուրաքանչյուր թերթիկի վրա մեկսանտիմետրանոց շեղատառերով որևէ հայտնի բառ եմ գրում: Բառեր, որոնք մեր սաները բազմիցս կրկնել են՝ իրենց հայտնի առարկաների անվանումները (օրինակ՝ մայրիկ) կամ առարկաների անվանումներ, որոնք կան մեզ մոտ: Եթե բառը վերաբերում է երեխայի դիմաց գտնվող առարկայի, այդ առարկան մոտեցնում եմ երեխային, որ հեշտացնեմ բառի մեկնաբանությունը:

Ընթերցանության հմտության ձևավորման աստիճաններն են.

1. Հնչյունատառային նշանակության տիրապետումը: Հաջող և արագ տառերի ընկալումը հնարավոր է միայն բավական ձևավորել հետևյալ ֆունկցիաները.

հնչունային ընկալում, հնչյունային վերլուծություն, տեսողական վերլուծություն և սինթեզ:

2. Վանկային ընթերցանություն: Այս աստիճանում տառերի իմացությունը և ձայնային միացումը երեխայի համար դժվար չէ: Լավ կարդալու համար շատ կարևոր է սկզբնական շրջանում կարդալ վանկերով:
3. Ընթերցման սինթետիկ միջոցների կարգավորումը: Այս աստիճանը համարվում է անալիտիկ աստիճանից դեպի սինթետիկ աստիճան: Պարզ և ճանոթ բառերը արդեն կարդում են ամբողջական և սահուն, իսկ բարդ և քիչ ծանոթ բառերը կարդում են վանկերով: Երեխան այս աստիճանում դեռ չի կարողանում սահուն կարդալ:
4. Սինթետիկ ընթերցանություն: Այս աստիճանում երեխան արդեն կարողանում է սահուն կարդալ առանձին բառերը: Այս աստիճանում երեխան արդեն կենտրանանում է ոչ թե լավ կարդալու վրա, այլ կենտրանանում է նյութի իմաստը հասկանալու համար:

Կարևոր գործոն է նաև ծնողների օրինակը: Այն երեխաները, որոնք հաճախ են տեսնում, որ իրենց ծնողները կարդում կամ որևէ բան են ուսումնասիրում, ամենայն հավանականությամբ, նույնպես այդ ամենը կդարձնեն իրենց կյանքի անբաժանելի մասը: Սակայն ինչպե՞ս կարող ես դու՝ որպես ծնող, օրինակելի լինել այդ հարցում, եթե կարդալ առանձնապես չես սիրում: Գուցե անհրաժեշտ է, որ ճիշտ առաջնահերթություններ դնես և փոխես վերաբերմունքդ ընթերցանության հանդեպ:

Սովորաբար «Գիրք կարդալ սիրու՞մ ես» հարցին՝ դպրոցականները պատասխանում են ոչ՛ պատճառաբանելով, որ դա ուղղակի պարտականություն է, այն էլ՝ շատ ձանձրալի:

Ի վերջո ինչու՞ է անհրաժեշտ ուշադիր և շատ կարդալ: Նախնառաջ գիրք կարդալը օգտակար է: Զարգացնում է մտածողությունը: Գիրք կարդալու շատ կարևոր

առանձնահատկություններից մեկը հենց սա է: Կարդալիս մենք շատ ենք մտածում՝ փորձելով հասկանալ այս կամ այն իրավիճակը, հերոսի հոգեվիճակը:

Անհետացնում է լարվածությունը: Օրվա մեջ լարվելու շատ առիթներ ենք ունենում, և այդ լարվածությունից ազատվելու շատ լավ տարբերակ է կարդալը՝ հատկապես բարձրաձայն:

Զարգացնում է բառապաշարը: Գրքում առկա են մի շարք ծանոթ ու անծանոթ բառեր, որոնք ուզած-չուզած ընդգրկվում են մեր բառապաշարի մեջ: Եվ առօրյա խոսքում անգամ մենք օգտագործում ենք դրանք:

Ի վերջո շատ կարդալու շնորհիվ մենք դառնում ենք ավելի բանիմաց, խելացի, տեղեկացված և հասարակությանը պիտանի մարդ:

Ընթերցանությունն ուսուցման միջոցներից մեկն է, և այս դեպքում էլ, ինչպես փորձն է ցույց տալիս, ճիշտ է սովորողին ազատություն և ընտրության հնարավորություն տալը՝ գրքի ընտրությունը թողնելով նրան: Սակայն ինչպես ծանոթացնել և հասու դարձնել սովորողին ընթերցասրահի գրքի պաշարներին և ինչպես նրա մեջ այդ գրքերը կարդալու հետաքրքրություն և ցանկություն առաջացնել: Մեր աշխատանքի ընթացքում այդ նպատակով իրականացրել ենք մի շարք հնարներ, կազմակերպել ենք միջոցառումներ: Ընտրովի լրագրության դասընթացին իրականացնում ենք «Իմ ընթերցարանը» շարունակական նախագիծը, որի յուրաքանչյուր թողարկմանը 6-րդ դասարանի սովորող Տաթև Ղազարյանը համառոտ պատմում է մի որևէ հեքիաթ, բայց չի ավարտում՝ առաջարկելով ընթերցել հեքիաթի ավարտը և «կարծիքներ» բաժնում գրել: Իբրև խրախուսում՝ այն սովորողները, ովքեր առաջինն են պատասխանում, արժանանում են մրցանակի: Կազմակերպել ենք նաև «Անտարես» հրատարակչության ձևավորման մասնագետի հետ հանդիպում, որին նախապատրաստվելիս մի քանի սովորողներ կարդացել են Մարկ Տվենի «Թոմ Սոյերի արկածները» գիրքը, միասին ընտրել ենք փոքր հատված և բեմադրել: Բեմադրությանը ներկա էին այլ սովորողներ ևս:

Այս փոքրիկ միջոցառումը շատ ոգևորիչ էր, ու բազմաթիվ սովորողներ շտապեցին գիրքը ընթերցելու: Ընթերցանության խրախուսիչ մեթոդներից մեկն էլ քննարկումներն են: Ժամանակ առ ժամանակ ընթերցասրահում կազմակերպվում են գրքերի քննարկումներ: Սովորողներն իրենց սիրելի գրքերի մասին նախապես պատրաստում են նյութեր, պատմում են, թե ինչեր են սովորել գրքերից: Նման դեպքերում սովորոբար ծավալվում է ակտիվ քննարկում, սովորողները լրացնում են իրար, հարցեր տալիս, ստուգում միմյանց: Նման քննարկումները, որպես կանոն, անցնում են շատ ակտիվ ու շատ արդյունավետ են, որովհետև դրանցից հետո սովորողները, լսելով այս կամ այն գրքի մասին, ցանկանում են կարդալ:

Ուսումնասիրելով ժամանակակից ընթերցավարների փոձը՝ կիրառել ենք նաև խաղ-ընթերցանության հայտնի մեթոդներից մեկը: Ընթերցանությունը կազմակերպվեց հետևյալ կերպ. սովորողների առջև դրվեցին ընթերցարանի բոլոր գրքերը՝ նրանց ազատ ընտրության հնարավորություն տալով: Սովորողներն ունեին համացանցին միացված նեթբուքներ, որպեսզի կարողանան նաև էլգրքեր կարդալ: Երբ բոլորն ընտրել էին իրենց գրքերը, սահմանվեց ընթերցանության համար ժամանակ՝ պայմանով, որ յուրաքանչյուր սովորող իր կարդացած գրքից պետք է առանձնացնի փոքրիկ հատված՝բարձրաձայն ընթերցելու համար: Համապատասխան ժամանակի լրանալուց հետո սովորողներն ընթերցեցին իրենց ընտրած հատվածները, ապա կազմվեցին խմբեր, որոնք պետք է լսած նյութերի հիման վրա հորինեին սեփական պատումները:

Ինչպես փորձը ցույց տվեց, աշխատանքն անչափ հետաքրքիր ու գրավիչ էր սովորողների համար, նրանք դասի սկզբից մինչև վերջ ոգևորված էին, հետաքրքրված, դասից հետո գրեթե բոլոր սովորողներն իրենց համար առանձնացրին գրքեր՝ տանը ընթերցելու նպատակով: Աշխատանքի ընթացքում հստակ երևացին մարդկային մի շարք հատկանիշներ՝ հանդուրժողականություն, կողքինի կարծիքը լսելու և հարգելու կարողություն, ինքնուրույնություն, ստեղծականություն....

Ընթերցանությունը՝ զարգացնում է միտքը, մտահորիզոնը:

Գրքերի կարևորագույն և լավ առավելություններից է դրական ազդեցությունը, որը թողնում են մեր մտահորիզոնի վրա: Ընթերցանության ընթացքում շատ մտածում ենք, խորհում, որպեսզի հասկանանք ստեղծագործության բուն իմաստը:

Ընթերցելու ժամանակ սովորաբար պատկերացնում ենք շատ մանրամասներ՝ հերոսներին, նրանց հագուստը, կոլորիտը, շրջապատող իրերը: Իհարկե կարևոր է նաև հիշել բազում տերմիններ,որոնք հարկավոր են ստեղծագործության լիարժեք հասկանալու համար: Հենց այս պատճառով է, որ ընթերցանությունը մարզում է տրամաբանությունն ու լավացնում հիշողությունը:

Կարդալիս անհրաժեշտ է կենտրոնանալ ստեղծագործության բուն իմաստի,բովանդակության վրա, և չշեղվել այլ իրերի ու տեղերի վրա: Սա շատ օգտակար հմտություն է ցանկացած այլ գործունեությամբ զբաղվելու համար: Եվ բնականաբար գրքեր ընթերցելը զարգացնում է օբեկտիվ դատելու կարողությունը, ինչպես նաև նպաստում է մտածված, կշռադատված որոշումների կայացմանը:

Առաջին հերթին երեխան պետք է ունենա համապատասխան լեզվական գիտելիքներ՝ հնչյունի, տառի, վանկի, բառի, բառակապակցության, նախադասության մասին, իմանա օ-ի, ո-ի, է-ի, ե-ի, գաղտնավանկ ը-ի ուղղագրությունը, կարողանա ճիշտ վանկատել ու տողադարձել, կարողանա կազմել բառակապակցություններ ու նախադասություններ:

Հայտնի փաստ է, որ ընթերցանության կարողությունների ձևավորման համար հիանալի միջոց է բարձրաձայն ընթերցումը, որը հնարավորություն է տալիս լսելու և գնահատելու սեփական խոսքը, բարելավելու նրա արտահայտչականությունը: Խոսքի արտահայտչականության զարգացման գործում անգնահատելի է դերերով կարդալը և բնագրի դրվագների, խնդուկների, մանրապատումների բեմադրությունը: Դրանց մեծ տեղ է տրված «Այբբենարան»-ում: Այս մասին առավել մանրամասն շարադրված է դասերի մեթոդական մշակումներում: Ամենակարևոր գործոններից մեկը հասկանալով ընթերցանությունն է, որին պետք է հասնել դարձյալ աստիճանաբար: Երեխան պետք է

ընկալի իր կարդացածի իմաստը, և կարդացածը պետք է հետաքրքրի նրան։ Այս բանին կարելի է հասնել երեխաներին հրամցնելով հետաքրքրաշարժ բնագրեր, նրանց սրտին ու հոգուն հարազատ հետաքրքրական պատմություններ։

Սրան շատ է նպաստում նաև գրքի մեթոդական կառույցում ընդգրկված բազմաբնույթ և համակարգված առաջադրանքների ամբողջությունը։ Ինչպես կարելի է տեսնել ներկայացված ցանկերից, այդ նպատակին ծառայում են մոտ երեսուն տեսակի բազմաբնույթ առաջադրանքներ։ Ահա այստեղ է այն բազմազանեցումը, որի մասին խոսք եղավ վերևում։ Երեխան կարդում է բազմաբնույթ նյութեր, մեկը մեկից հետաքրքիր, մեկը մեկից զարմանալի, մեկը մեկից ձգող։ Կարդում է առանց հարկադրանքի, հաճույքով, ուզում է իմանալ, ուզում է ուրախանալ, ուզում է լուծել, ուզում է գտնել պատասխանը։ Այս դեպքում կարդալը դառնում է ոչ թե նպատակ, այլ միջոց։ Նպատակը դառնում է ընկալումը, իսկ կարդալը դառնում է պայման։

Մեկ կարևոր հանգամանք ևս. երեխան սովորում ու վարժվում է շշուկով կարդալուն և կարդացածը ընկալելուն։ Երեխան սովորում է կարգավորել ընկալումը, վերլուծել ու եզրակացություններ կատարել։ Հասկանալով կարդալու կարողության ձևավորման համար ուսուցիչն իր զինանոցում ունի բացատրական ընթերցանության համապիտանի մեթոդը, ինչպես նաև լեզվատրամաբանական հետաքրքրաշարժ առաջադրանքների ընձեռած հնարավորությունը։ Ճիշտ ընթերցելու կարողությունների ձևավորմանը նպաստում են երեխաների ունեցած լեզվական գիտելիքները, ինչպես նաև բարձրաձայն ընթերցանությունը։

Սահուն կարդալու համար անգնահատելի են բազմակի ընթերցանությունը, բարձրաձայն և շշուկով ընթերցանությունը։ Արտահայտիչ կարդալու կարողություններ ձևավորելուն նպաստում են բարձրաձայն ընթերցանությունը, առոգանությանը և կետադրական նշանների գործածության իմացումն ու ընթերցելիս ճիշտ կիրառումը, դերային ընթերցումները, բեմականացումները։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բացի այդ, ընթերցանության բովանդակության ընկալումն էլ իր հերթին կարող է խթանող դեր կատարել (հետաքրքի՛ր է), մղել ընթերցանության, ինչի արդյունքում էլ բարելավվում է տեխնիկան։

Խնդրի լուծման համար անհրաժեշտ են այնպիսի մեթոդներ և գործիքներ, որոնք երեխայի մոտ կարդալու ցանկություն կառաջացնեն, կմղեն նրան ինքնուրույն ընթերցանության:

Կարդալու կարողության զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցից, և այն սերտորեն կապված է մյուս առարկաների յուրացման գործընթացին: Շատ կարևոր է նաև այն, որ երեխան լավ կարդալու հետ համատեղ տրված նյութը հասկանալով կարդա, ոչ թե մեխանիկորեն:

Տարվա ընթացքում ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն խթանող մի շարք մեթոդներ ենք կիրառել երկրորդ դասարաններում։

Մասնավորապես հետաքրքիր էր «Ուղղորդվող (կամ ընդհատումներով) ընթերցանության» մեթոդը, որը կիրառել ենք երկրորդ դասարաններում՝ նույն մոդելով ընթերցելով Ջ.Ռոդարիի մի շարք հեքիաթներ, և բավականին լավ արդյունքներ ենք գրանցել: Բնականաբար, ընթերցանությունն արտահայտիչ կարող է լինել միայն այն դեպքում, երբ ընթերցողը հասկանում է ստեղծագործության իմաստը, ընկալում է բնագրի գաղափարը, կարդում է ճիշտ և սահուն։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Տեր-Գրիգորյան, <<Հայոց լեզվի մեթոդիկա>>, Եր. 1988թ
2. Ջ. Գյուլամիրյան, <<Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա>>, Եր. 2009թ.
3. Ռ. Խարազյան, <<Աշակերտների բառապաշարի հարստացումը տարրական դասարաններում>>, Եր. <<Ասողիկ>> հրատ., 2003թ.
4. Մայրենիի դասագրքեր 1-4-րդ դասարաններ